ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ N 536 -Ա

«23» ապրիլի 2025 թվական գյուղ Ախուրյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՌԱՓԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 4-ՐԴ ՓՈՂՈՑ 61 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՔԱՂԱՔԱՑԻ ՆԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԵՍԻ ՄՈՒՐԱԴՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՆՈՎ ԶԲԱՂԵՑՎԱԾ ԶԲԱՂԵՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 16-րդ և 24-րդ կետերի, հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի և 2-րդ մասի դրույթներով, հաշվի առնելով քաղաքացի Նարինե Հովհաննեսի Մուրադյանի դիմումը և Շիրակի մարզպետի 1997 թվականի հունիսի 5-ի թիվ 109 որոշումը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2025 թվականի ապրիլի 15-ի թիվ 113-Ա որոշումը, որոշում եմ՝

1. Սեփականության իրավունքով քաղաքացի Նարինե Հովհաննեսի (ծնված 08/04/1964 թվական), Արմենուհի (ծնված 15/12/1983 թվական), Քրիստինա (ծնված 25/02/1986 թվական) և Զասենիկ (ծնված 29/06/1987 թվական) Հրաչյայի Մուրադյաններին տրամադրված, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Առափի բնակավայրի 4-րդ փողոց 61 հասցեում գտնվող բնակելի տնով զբաղեցված, 08-016-0049-0005 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 1417,2 քառակուսի մետր մակերեսով հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարել շինության սեփականատիրոջը:
2. Սույն որոշման 1-ին կետով օտարվող հողամասի վաճառքի գինը սահմանել կադաստրային արժեքի չափով՝ մեկ քառակուսի մետրի համար 337 Հայաստանի

Հանրապետության դրամ: Հողամասի ընդհանուր արժեքը կազմում է 477597 (չորս հարյուր յոթանասունյոթ հազար, հինգ հարյուր իննսունյոթ) դրամ:

3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացիների հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացիների միջոցներով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում քաղաքացիներ Նարինե Հովհաննեսի, Արմենուհի, Քրիստինա և Զասենիկ Հրաչյայի Մուրադյաններին պատշաճ ծանուցելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Զ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

«23» ապրիլի 2025 թվական
գյուղ Ախուրյան